ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԸ

Պետական պատմական թանգարանը Հայաստանի գիտահետազոտական և մշակութային կարևոր օջախներից մեկն է. իր հարուստ ֆոնդերով և մասսայական ցուցադրությամբ ամենամեծն է Հայաստանում։

Թանգարանի ազգագրական բաժինը կազմակերպվել է 1921 թ. վերջերին, Թիֆլիսից Երևան փոխադրված Հայոց ազգագրական ընկերության մեծ ժողովածուի հիման վրա։ Այդ տեղափոխումը կազմակերպել էր Ազգագրական ընկերության հիմնադիր Երվանդ Լալայանը, որը և եղավ թանգարանի ազգագրական բաժնի առաջին վարիչը։

1929—31 թթ. էջմիածնի թանգարանի գույքը հանձնվեց Հայաստանի Պատմության թանգարանին, որի մեջ զգալի տեղ էին գրավում արևմտահայերի տարազի և կահկարասիների հավաքածուները, որոնք մասամբ կազմվել էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1915—1918 թթ., արևմտահայերի գաղթի ժամանակ։

Թանգարանի ազգագրական ժողովածուները հարստացնելու, Կովկասի հայաբնակ վայրերում հայ ժողովրդի կենցաղն ու սովորությունները ուսումնասիրելու և թանգարանի համար ազգագրական իրեր ձեռք բերելու նպատակով սկսեցին կազմակերպվել գիտական արշավախմբեր դեպի Լեռնային Ղարաբաղ, Զանգեզուր, Մեղրի (1938 թ.), Լոռի—Ղազախ (1934—1935 թթ.), Ախալքալաք—Ախալցխա (1936 թ.), Աշտարակ (1938 թ.), Նոր-Բայազետ (1938 թ.) և այլ վայրեր՝ Երվանդ Լալայանին բաժնի վարիչի պաշտոնում փոխարինած պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանի ղեկավարությամբ։ Որոշ ընդմիջումից հետո, հատկապես վերջին տարիներս, ավելի հաճախ են կազմակերպվում արշավախմբեր՝ ֆոնդերում եղած ժողովածուները լրացնելու նպատակով։ Այժմ ազգագրական ֆոնդն ունի մոտ 20000 առարկա, որոնք գրանցված են 9632 համարների տակ։ Այդ ժողովածուի մեջ, բացի հայկականից, կան նաև ուրիշ ժողովուրդների ազգագրության վերաբերյալ նյութեր։ Ֆոնդի ամենահին իրը նախշազարդ, հայերեն արձանագրությամբ պղնձե մի մեծ սկուտեղ է (6089 համարի տակ)՝ պատրաստված 1477 թ., ապա մի շուրջառ՝ պատրաստված 1501 թ., մի ոնդուկ՝ 1564 թ. և այլն։ Սկուտեղը խոր է, կենտրոնում մեծ շրջանակի մեջ փորագրված է բուսական զարդանախշ, նրա շուրջը կան ալիքաձև նախշեր, գազաններ, թռչուններ, սողուններ, հիշվում է նաև վարպետ Գյուրջիի անունը։

Հայաստանում պղնձի հանքավայրերի առկայությունը հնարավորություն է տվել այդ մետաղից պատրաստելու կենցաղային առարկաներ։ Մեր ունեցած պղնձե իրերը՝ սկուտեղներ, ափսեներ, թասեր, սափորներ (գյուգյումներ), բաղյաններ, թավաներ, կաղամարներ և այլն, պատրաստված են գերազանցապես XVIII—XIX դարերում, Երևանում, էջմիածնում, Թոքատում, Էրզրումում, Վանում։ Պղնձե առարկաների վրա սովորաբար փորագրված են բուսական՝ հատկապես նշաձև և տերևաձև, կենդանական (եղնիկներ, թռչուններ, ձկներ) նախշեր, զարդարված երկրաչափական՝ ռոմբաձև, շրջանաձև ու ծեք գծանախշերով։ Պղնձե անոթներին հատուկ են նաև զույգ գոտկաձև գծանախշերը։ Նրանց վրա փորագրված են արձանագրություններ պատրաստող վարպետի անվան, պատրաստելու տարեթվի նշումով։

Մեծ սկուտեղները անցյալում ծառայել են որպես սեղան, իսկ այժմ կենցաղից բոլորովին դուրս են եկել։ Այժմ պղնձե առարկաներից գործածվում են մեծ մասամբ կաթսաները, խաղողի հյութից դոշաբ, շարոց (սուջուխ) պատրաստելու և հատուկ հարմարանքների հետ օդի քաշելու համար։ Ֆոնդում եղած պղնձե իրերի հարուստ հավաքածուները ցույց են տալիս, որ այդ մետաղը շատ տարածված է եղել Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, չնայած այն բանին, որ նրանք պատրաստվել են քաղաքներում, որտեղ գոյություն են ունեցել պղնձագործներ՝ իրենց հատուկ թաղամասերով։ Պղնձե առարկաները աղչկա օժիտի անհրաժեշտ մասն են կազմել։

Ոսկերչությունը հայ ժողովրդի մեջ տարածված հնագույն արհեստներից մեկն է։ Դեռևս II հազարամյակի բնակավայրերում և դամբարաններում գտնվել են ոսկե բարձրարվեստ առարկաներ։ Հայտնի են ուրարտական ոսկե զար-

դերը։ Ոսկերչության զարգացման համար Հայաստանն ուներ հումքային մեծ հնարավորություններ՝ ոսկու հանքեր։ Այն մեծ զարգացման հասավ IX—VI դդ. Ուրարտուում՝ հատկապես Տոսպում (Վան), իսկ միջնադարում կատարելության հասավ նախ Դվինում և Անիում՝ IX—XIII դդ., իսկ հետո՝ Էրզրումում, Վանում։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո (1828 թ.), Էրզրումից ներգաղթողների հետ միասին Անդրկովկաս են տեղափոխվել նաև շնորհալի ոսկերիչներ և շարունակել այդ արհեստի զարգացումն իրենց նոր բնակության վայրերում։ Թանգարանի ազգագրական ֆոնդում պահվում են Էրզրումցի ոսկերիչների թելքաշ գործերը, Ախալցխայի ոսկերիչներ Կոջոյանի, Արիսի թելքաշ, փորագրման, սեղման տեխնիկայով պատրաստված նուրբ սափորները, զարդերը, ծխախոտատուփերն ու դրամապանակները, վանեցի վարպետներ Դիոնիսյանի, Հացագործյանի՝ թելքաշ, փորագրված, սեղած ծխախոտատուփերը, սկահակները, թասերը, սափորները գավաթներով (№ № 6347, 5355, 6303) և այլն, դարբաղցի վարպետ Բաղամի սափորը՝ փորագրազարդ կոկոսի ընկույզի հետ նոմբինացված (№ 6300), գինու գավաթները իրենց պնակներով (№ № 6319, 6320), դաշույնը, շերեփը և այլ էմալապատ գործեր, երիտասարդ հայրենադարձ արծաթագործ Կույումջյանի «Դվին», «Տավրոս», «Հայաստան» սափորները, հայ թագավորների դիմանկարներով գոտին, ժամանակակից արծաթագործ արվեստագետներ Տեր-Ղևոնդյանի դրվագված մեծ ափսեն՝ թռչնաձև մարդագլուխ զարդով, Կյուրեղյանի ցանցկեն, գունավոր քարերով զարդարված տակառիկը իր գավաթներով ու գավաթակալներով և ուրիշ շատ վարպետների գործեր։

Թելքաշ, սեղման, դրվագման, փորագրման, հատիկավոր էմալապատման տեխնիկան վաղուց հայտնի է հայ ոսկերիչներին։

Ֆոնդում եղած ոսկե և արծաթե իրերի ժողովածուները ցույց են տալիս, որ XVIII—XX դարերում հայ ոսկերիչները, շարունակելով աշխատել հնում ընդունված տեխնիկական եղանակներով և գործադրելով ավանդական զարդամոտիվներ, ստեղծում են հոյակապ գործեր։ Վարպետներից ոմանց գործերում երբեմն կոմբինացված ձևով է հանդես գալիս տեխնիկական տարբեր եղանակների կիրառությունը՝ թելքաշի հետ դրվագումը, սեղի հետ փորագրումը և այլն։

Ֆոնդը հարուստ է արհեստների տարբեր տեսակների գործիքներով ու նրանցով պատրաստված իրերով։ Հայաստանում դեռևս հին դարերից սկսած զարգացած է եղել կավագործությունը։ Հայտնի է էնեոլիթյան փայլեցրած, գունազարդ խեցեղենը, որը պատկանում է մ. թ. ա. IV—II հազարամյակներին։ Միջին դարերում մեծ չափով արտադրվել է գունագեղ ջնարակած խեցեղեն ու հախճապակե ամանեղեն։

Հայաստանում զարգացած են եղել նաև գինագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, ջուլհակությունը և շատ ու շատ այլ արհեստներ, որոնք ևս ծագել են հնագույն ժամանակներում։ Ֆոնդում պահվածներն են գինագործի, ոսկերիչի, պղնձագործի, դարբնի, բրուտի, շալագործի, թամբագործի, ջուլհակի գործիքներ, կտավ գործելու, գորգագործական դաղգահներ։

Հայ արհեստավորները կազմել են տարբեր արհեստների գծով իրենց համքարությունները Վանում, Կարինում, Երևանում, Ալեքսանդրապոլում, ինչպես նաև Թիֆլիսում, Ղրիմում, Ախալցխայում, Նոր Նախիջևանում։ Այդ համքարությունները գոյություն են ունեցել մինչև XIX դ. վերջերը։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով սկսվեր է նրանց քայքայումը։ Համքարությունները ունեցել են իրենց դրոշակը, կանոնադրությունը, սովորությունները։ Ֆոնդում կան հյուսների, պղնձագործների և այլ արհեստավորական համքարությունների դրոշակներ, գրավոր նյութեր և այլն։

Ազգագրական ժողովածուները հարուստ են ազգային տարազի կոմպլեքսներով։ Զգեստները կարված են գերազանցապես տեղում արտադրած բրդե, մետաքսե, բամբակե կտորներից։ Բրդե կտորի արտադրությամբ հայտնի է եղել Շատախի շրջանի Թաղ գյուղը։ Այնտեղ գործած կտորը ունի 54 սմ լայնություն և 12 մետր երկարություն։ Այն վաճառքի են հանել Վանում, Էջմիածնում, Թիֆլիսում և Ռուսաստանի տարբեր քաղաքներում։ Հավաքածուներում կան Շատախի շալից կարված շալվարներ, գրուններ, ելակներ։ Զգեստների հավաքածուներում աչքի են ընկնում Կարնո հայության՝ Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Ղարսի, Արզվինի, ոսկեզօծ և արծաթաթել ասեղնագործությամբ զարդարված կանացի թավշե ջուպպաների և գոգնոցները։

Ընդհանուր առմամբ հայ ժողովրդի տարազը երկու հատվածի է բաժանվում՝ արևելահայության և արևմտահայության, բայց յուրաքանչյուր հատվածն ունի իր տարբեր ազգագրական շրջանները, հետևապես և տարազի տարբեր ձևերը։

Զգեստների կոմպլեքսների մեջ են մտնում նուրբ մետաքսե գլխաշորերը և հաստ, ասեղնագործ չամբարները, գլխի հարդարանքի մասե-

ը՝ ֆաս փիսկիլով, օյա, չիխտի-կոպի, պոլի, բերանակապեր (Զանգեզուր, Ագուլիս), ինչպես նաև ադանելիքը՝ գուլպա, կոշկեղեն, տրեխներ և այլն։

Ազգագրական ֆոնդում զգալի տեղ են գրավում գորգերը, խուրջինները, անկողնակալները, ձիու թամբի ծածկոցները։ Գորգագործությունը որպես տնայնագործական արհեստի հիմնական տեսակներից մեկը, հին պատմություն ունի։ Միջին դարերում մեծ հռչակ են վայելել Դվինի գորգերը։ Դեռ այսօր էլ մի շարք թանգարաններում և մասնավոր ժողովածուներում պահվում են հայկական թանկարժեք գորգեր։ Մեզ հասած հնագույն հայկական գորգը, 1202 թ., գտնվում է Վիեննայում։ Այն գործված է այժմյան Կիրովաբադի շրջանի Բանանց հայկական գյուղում։ Ֆոնդում կան Վասպուրականում, Զանգեզուրում, Էրզրումում, Լեռնային Ղարաբաղում, Երևանում, Լենինականում գործած գորգեր։

Գորգեր գործելու մեջ է հանգես եկել հայ կնոջ շնորհքը, ճաշակը, գեղեցկի նրա ըմբռնումը։ Գորգերի միջոցով նա կահավորել, գեղեցիկ է դարձրել տունը, սենյակը։ Գորգերն իրենց յուրահատուկ զարգաձևերն ունեն, որոնց մեջ աչքի են ընկնում ոճավորված բուսական և կենդանական մոտիվները։ Օգտագործել են բուսական և կենդանական ներկեր, XIX դարի վերջերից՝ նաև քիմիական ներկեր։ Հայաստանում, դեռևս հին դարերից սկսած, նշանավոր է եղել կարմիր ներկի մի տեսակը, որը կոչվել է որդան կարմիր և արտահանվել է աշխարհի շատ երկրներ։ Ֆոնդի գորգերից երևում է, որ հայկական գորգերի մեջ առավել չափով օգտագործվել են կարմիր, կապույտ, ոսկեգույն, դեղին, կաթնագույն, կանաչ, սև գույներն իրենց երանգներով։ Գորգերի ժողովածուում կան նաև նոր գորգեր, որոնց մոտիվները վերցված են հայկական մանրանկարչությունից, հուշարձաններից։ Հայկական գորգերի մասին մենագրական լուրջ ուսումնասիրություն է գրել Թանգարանի նախկին աշխատակից, հանգուցյալ Վ. Թեմուրճյանը։

Ֆոնդում պահվում են ասեղնագործության և ժանյակագործության բազմատեսակ նուրբ նրմուշներ։ Ասեղնագործված բարձի, վերմակի երեսները, ծածկոցները (եկեղեցական և աշխարհիկ), սփոցները, անձեռոցիկ-սրբիչները, զգեստի տեսակները գլխաշոր, գոգնոց, ջուպպա, շալվար, կատարված են տարբեր տեխնիկայով՝ հարթակար (լիցք), վերադիր կար, ուղղաձիգ կար, խաչկար, թելքաշ և այլն։ Ասեղնագործության համար օգտագործվել են բրդե, մետաքսե, բամբակե գունավոր թելեր, գույնգույն ուլունքներ։ Ֆոնդում շատ են արծաթե և ոսկեզօծ թելերով կատարված ասեղնագործ առարկաները՝ մեծ գորգը (№ 1991), ձիու թամբի ծածկոցը (№ 6268), էջմիածնի վանքի պատկերը (№ 3731) և այլն, որոնք կատարված են Վանում, Բարձր Հայքում։ Ասեղնագործության մեջ օգտագործվել են բուսական-կենդանական մոտիվներ, ինչպես նաև երկրաչափական նախշեր։ Ասեղնագործության տարբեր տեսակների հայտնի վայրեր են Այնթափը, Մարաշը, Վանը, Էրզրումը։

Վանի նուրբ ժանյակները հայտնի են եղել նաև Հայաստանի սահմաններից դուրս։ Հավաքածուի № 435, № 438, № 447 և այլ ժանյակները վանեցի կանանց ձեռքի նուրբ գործեր են։

Փայտե իրերի հավաքածուն համեմատաբար փոքր է։ Բայց տարիների ընթացքում հաջողվել է բնակչությունից ձեռք բերել և ստեղծել արժեքավոր ժողովածուներ, որոնք բնորոշում են այս կամ այն շրջանի բնակչության տնտեսությունը, մշակույթը, զբաղմունքի տեսակը։ Ֆոնդում կան լուսամուտի ցանցեր, բազկաթոռներ, խնոցիներ, օրորոցներ, սխտործեծիկներ, դդրլոնցներ, գաթանոխշիկներ, գդալ-շերեփներ, դաճեր, սկուտեղներ, տուփեր և այլն, ինչպես նաև նրաժշտական գործիքների տեսակներ, պատրաստված կաղնու, ընկուզենու, ծիրանի և այլ տեսակի փայտից։ Այս փայտե իրերի զգալի մասը փորագրազարդ է, հայկական ճարտարապետությանը հատուկ աշխարհիկ մոտիվներով։ Շնորհալի վարպետ Ազատյանի սկուտեղը և մյուս վարպետների գործերը ցույց են տալիս հայ արվեստագետ-վարպետների հմտությունը նաև այդ բնագավառում։

Արտադրության միջոցներից ֆոնդում իր բազմազանությամբ հարուստ է գյուղատնտեսական գործիքների հավաքածուն (գութան, վնցկեկամ, թի, եղան, բրիչներ, մանգաղներ և այլն)։ Գութանը և արորը Հայաստանում օգտագործվել են դեռևս հնագույն ժամանակներում։ Զվարթնոցի տաճարի տնտեսական շենքերի ավերակները պեղելու ժամանակ ի հայտ է եկել գութանի խոփ, որը պատկանում է X դարին։ XIV—XVI դարերի բազմաթիվ տապանաքարերի վրա կան ձաղ գութանի պատկերներ, որոնք քաշում են առնվազն 6 զույգ եզներ և կոչվում են վէցկեկ։ Ընդհանրապես գութանը քաշել են 4—12 զույգ եզներ, նայած հողի կարծրությանը։ Հասկանալի է, որ ամեն գյուղացի, նույնիսկ միջակը, 4 կամ ավելի լուծ եզներ չէր կարող ունենալ, այդ պատճառով նրանք վարելու ժամանակ ընկերություններ էին կազմում. մի քանի տնտեսություններ միանում էին և հերթով վարում իրենց հողերը։ Ինչպես հայտնի է, գութանն արդեն վերացել է, այսօր միայն թանգարանում կարելի է տեսնել այն։ Իսկ արորը օգտագործվում է քարքարոտ տեղերում, մեծ

քեքություն ունեցող արտերում, տնամերձ հողամասերում և ոռոգման առուները հանելու համար, այսինքն այնպիսի տեղերում, որտեղ տրակտորը չի կարող աշխատել։

Ֆոնդի գյուղատնտեսական գործիքների նմուշները օգտագործվել են գերազանցապես Արարատյան դաշտում, Իջևանի, Նոյեմբերյանի շրջաններում։

Ֆոնդում կան նաև գյուղատնտեսության օժանդակ ճյուղերից մեկի՝ շերամապահության, ինչպես նաև ժողովրդի զբաղմունքի այլ տեսակներին՝ մեղվաբուծությանը, որսորդությանը, ձկնորսությանը վերաբերող գործիքներ և այլ առարկաներ։

Ազգագրական ֆոնդերը հարստացնում են խեցեղեն ու հախճապակե նուրբ անոթները։ XVIII—XX դդ. կավագործությունը այնպիսի զարգացում չի ապրել, ինչպես միջնադարում, բայց առանձին շրջաններում կավը շատ գործածական է եղել կենցաղում։ Կավից պատրաստած մարդակերպ աղամանները, կրակարանները, կարասները, ծափերն ու կճուճները, չորքանոթները, զանազան անոթները տարածված են եղել Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում և մինչև այսօր էլ որոշ վայրերում շարունակում են իրենց գոյությունը։ Խեցեղենը պատրաստված է ձեռքով և գրգի վրա։ Դրգի վրա գերազանցապես տղամարդիկ են աշխատել, իսկ ձեռքով պատրաստածը կանանց գործն է։

Ռանկարանի խեցեղենից շատ հետաքրքիր են մարդակերպ աղամանները։ XIX դարում տարածված են եղել նաև կենդանակերպ աղամանները, որոնք ունեն այծի մարմին և մարդկային գլուխ կամ սոսկ ֆանտաստիկ չորքոտանու էներպարանք։ Աղամանների ձևերը ավելի հին շրջանում կապված են եղել տոտեմիզմի՝ կենդանապաշտության հետ, իսկ ուշ ժամանակներում մարդու կերպարանք են ստացել և ձեռք են բերել նոր իմաստ։ Ըստ ազգագրագետ Վ. Ռոդոյանի, հայկական մարդակերպ և կենդանակերպ աղամանները եղել են նախ կուռքեր, ապա Անահիտ մայրաստվածության արձաններ։ Աղը հայերի մեջ պաշտամունքի առարկա է եղել հնուց ի վեր, ուստի, նույն հեղինակի կարծիքով՝ այն գետեղվել է կուռք-արձանի մեջ։ Դրանով պետք է բացատրել, որ աղամանները երբեմն պատկերում են կնոջը՝ երեխաների հետ միասին։ Աղամանը մոր խորհրդանշանն է, իսկ աղը որդեծնության պաշտպան-ոգին, այդ պատճառով էլ դարեր շարունակ նորածին երեխայի վրա աղ են ցանել, որը պետք է պաշտպաներ երեխայի առողջությունը և ապահովեր նրա կյանքը։ Կուռք-արձան աղամանները պահվել են տան ամենապատվավոր անկյունում, պատվանդանի վրա կամ պատրհանի մեջ։ Թանգարանի ազգագրական ֆոնդում եղած աղամանների գլուխները պատրաստված են ճիշտ այն գլխակապման ձևով, որը մինչև այժմ հայտնի է ավագ սերնդի մեջ։ Նրանք ունեն մազի հյուսեր ետևի կողմից, որոնք փորի վրա, նրա տակ՝ մանյակ-հեքյալ։ Աղամանների հանդամանալից ուսումնասիրությունը մեծ չափով կպարզի մոր պաշտամունքի աստիճանական զարգացումը, ինչպես նաև կճշտի այդ նույն աստվածության տարածման սահմանները։

Կնոջ կերպարանքով կավամանի պաշտամունքը Հայաստանում եզակի չէ. այն տարածված էր հատկապես փոքրասիական հնագույն պետություններում և առաջավոր Ասիայում։ Բայց տարբերությունն այն է, որ այդ երկրների՝ պաշտվող կավամանները այն նպատակին չէին ծառայել, ինչ հայկականը։ Կավամանների ֆոնդում պահվում են նաև ժամանակակից խեցեգործներ Բդեյանի, Սիմոնյանի, Շահվերդյանի, Աղաջանյանի գործերը, ինչպես նաև Յուվայում գործող կավագործության արհեստանոցի արտադրած կենցաղային առարկաները։

Ազգագրական ֆոնդում զգալի տեղ են գրավում ազգագրական քարտեզներն ու բազմաթիվ լուսանկարների, նեգատիվների հարուստ հավաքածուն։ Այստեղ են պահվում Ա. Պատրիկի կազմած «Հայ ժողովրդի տարաղի գունավոր քարտեզը», որ նա պատրաստել է ֆոնդում եղած զգեստների ուսումնասիրության հիման վրա. քարտեզում տրված են պատմական Հայաստանի տարբեր շրջանների տղամարդկանց, կանանց և երեխաների հագուստի տեսակները, Խ. Ավդալբեգյանի կազմած մեծ քարտեզները՝ «Արևելյան Հայաստանի ազգագրական քարտեզը Ռուսաստանին միացվելուց առաջ, մինչև 1827 թ.», «Արևելյան Հայաստանի ազգագրական քարտեզը Ռուսաստանին միացվելուց հետո, 1829—1832 թթ.», կամերալ նկարագրության տվյալներով, և այլ քարտեզներ։

Ֆոնդում են գտնվում անվանի նկարիչներ Վ. Սուրենյանցի «Մշեցի հայ կին», «Վանեցի հայ տղամարդ», «Զեյթունցի հայ տղամարդ» և այլ գործերը, Ախիկյանի «Ջավախեցի և Թիմարցի հայ կանայք», «Պարսկահայուհի», Լանսերեի «Շամախեցի հայ կին», «Ախալցխացի հայ կին», «Նորքեցի հայ կին» նկարները և շատ ուրիշ նկարիչների գործեր։

Սովետական Միության տարբեր քաղաքներից Երևան են գալիս բազմաթիվ արվեստագետներ, նկարիչներ, կիրառական արվեստի ներկայացուցիչներ, որոնք Մոսկվայի, Լենինգրադի, Ռիգայի, Տալինի, Կիևի, Խարկովի, Խերսոնի, Իվանովոյի և այլ քաղաքների համապատասխան ֆաբրիկաների նոր արտադրանքը գեղարվեստորեն ձևավորելու համար օգտվում են

այս հավաքածուների մոտիվներից և զարգանախշերից։

Թանգարանի ազգագրական ֆոնդի մի մասը ցուցադրված է։ Ցուցադրությունը սկսվում է նախնադարյան համայնական հասարակարգից՝ Արտին լեռան ստորոտում (Արագած) գտնված Շելյան կուլտուրայի ցուցադրումով և ավարտվում է XIX դարի վերջի նյութերով։ Ցուցադրությունը դասավորված է ըստ հասարակության զարգացման ֆորմացիաների։

Ազգագրական ֆոնդի լավագույն նմուշները ցուցադրված են XVI—XIX դարերի հայ ժողովրդի պատմության և մշակույթի համատեղ ցուցադրության սրահում։ Ազգագրական նյութերը պատմությանը զուգընթաց դասավորելուց բացի հաշվի են առնված նաև առանձին բնադավառները՝ գյուղատնտեսությանը հատկացված է հատուկ սրահ, արհեստներին՝ առանձին և այլն։ Առանձին ազգագրական շրջանների տարազը, կենցաղային իրերը ցուցադրված են օգտագործելով նաև քարտեզներ, ազգագրական լենության նկարներ և այլն։

Թանգարանը կազմակերպել է հայ ժողովրդի պատմության շրջիկ ցուցահանդես, որի մեջ զգալի տեղ է հատկացված նաև ազգագրությանը։

Թանգարանի ազգագրական հարուստ ժողովածուները եղել են և երկար կծառայեն իբրև հայ ժողովրդի պատմության, նրա տնտեսության ու արտադրական կյանքի, կենցաղի, մշակույթի և արվեստի զանազան ճյուղերի ուսումնասիրման ու գնահատման կարևոր աղբյուր։

Ն. ԱՎԱԳՅԱՆ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՄԱՍԻՆ

1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

1929 թ. հունվարի 9-ին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների ազգային բարձրագույն դպրոցում հավաքված մի խումբ ֆրանսիացի գիտնականներ և արվեստագետներ՝ ակադեմիկոս հայագետներ Անտուան Մեյեն, Ժրեգերիկ Մակլերը, Հ. Լուի Մարինոբ, հայ դարավոր մշակույթի և այն ստեղծած ժողովրդի բարեկամներ բյուզանդագետ Շարլ Դիլը (Ֆրանս. ակադեմիայի անդամ), սլավոնագետ Պոլ Բուայեն, արվեստագետ (1929 թ. ակադեմիայի անդամ) Գաբրիել Միլլեն, Արևելյան կենդանի լեզուների բարձր. դպրոցի տնօրեն Պոլ Ալֆանդերին, Կամեդի-Ֆրանսիզի ակադեմի գերատեսուչի Գաբրիել Ռեմալը և ուրիշներ, ինչպես նաև ֆրանսիական մի քանի հայկական հիմնում են Société des Études arméniennes հայագիտական ընկերությունը և նրա պաշտոնական պարբերական Revue des Études arméniennes հայագիտական հանդեսը։ Մակայն դեռևս 1919 թ. աշխատեր Ա. Մեյեն և Ֆ. Մակլերը, որոնք շատ մեծ ավանդ են թողել հայագիտության, արդեն որոշել էին ընկերության նպատակը, նախագծել հանդեսի հնարավոր ուղղությունը, և նրանց նախաձեռնությամբ էր հրավիրված հիմնադիր նիստը։ Ուստի այդ երկու հայագետներին է պատկանում ընկերության և նրա հանդեսի ստեղծման պատիվը։ Ըստ ամենայնի էլ առաջին հիմնադիր նիստում Մեյեն ներկաներին պարզաբանում է հայագիտական ընկերության նպատակը, այն է՝ զեկուցումներով, հաղորդումներով, հայագիտական նստաշրջաններով և հատկապես հայագիտական հանդեսի հրատարակությամբ Եվրոպայի առաջ բացել հայագիտության դռները, դարձնել հայ ժողովրդի անցյալին և ներկային վերաբերող հետազոտությունները, հրատարակությունները, ճանաչել տալ հայ ժողովրդին, որը, ի հնումս պատերազմում կրած վայրագ ջարդերի, արհավիրքների մի անգամ ևս դուրս էր եկել վիրավոր, բայց պահել էր իր կենսունակությունը։ Մեյեի և Մակլերի հիմնադրած հայագիտական այս ընկերությունը և հանդեսը մարդասիրական և հայասիրական այն միջոցառումներից էին, որ ֆրանսիացի ոգեշունչ մտավորականները ձեռնարկել էին պատերազմի ժամանակ և շարունակելու էին դրանից հետո՝ հայ ժողովրդի մշակույթը, բարոյական արժանիքները քաղաքակիրթ աշխարհին հայտնի դարձնելու և դրանով իսկ նրա ոտնակոխ արված իրավունքները պաշտպանելու նպատակով։

Առաջին նիստում բնորոշում է ընկերության վարչական կազմը՝ պատվավոր նախագահ՝ Գյուստավ Շլումբերժե, ակադեմիայի անդամ. նախագահ՝ Շարլ Դիլ. նախագահի տեղակալներ՝ սենատոր Վիկտոր Բերար (մահ. 1931 թ.), և Ա.-Ֆ. Հերոլդ. Մարդու իրավունքների լիգայի նախագահի տեղակալ. գլխավոր քարտուղար՝ Ա. Մեյե. կոչված դր Ֆրանսի գաղտնաակադեմիայի անդամ. կառավարիչ-գանձապետ՝